

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՀՀ վարչական դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

**ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԻՀԻԼԻԶՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(1999-2006 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ)**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում 1999-2006 թվականներին նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի միջնորդման և դրա պատճառների բացահայտմանը:

Ներկայացվում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության որոշման ինստիտուտների տարբերակումը, օրինակներ դատական պրակտիկայից, ինչպես նաև հեղինակավոր գիտնականների մոտեցումներ՝ կապված նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու դատարանների լիազորության հետ:

Անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի այն որոշմանը, որով վերջ դրվեց՝ դատարանների՝ նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելուց խուսափելու պրակտիկային:

Հիմնաբառեր- նորմատիվ իրավական ակտ, դատական վերահսկողություն, միջնորդ, սահմանադրականություն, օրինականություն, գործադիր իշխանություն, ՀՀ վճարելի դատարան, ՀՀ սահմանադրական դատարան:

Ընդհանուր դրույթներ

ՀՀ-ում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի կայացման ճանապարհը եղել է բարդ: Թեև այսօր այն իրողություն է, սակայն Հայաստանի Հանրապետությունում եղել է ժամանակահատված, երբ ՀՀ Նախագահի ու ՀՀ կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության գաղափարը դատարանների կողմից մերժվում էր: Դա վերաբերում է 1999-2006 թվականներին:

17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք¹) 26-րդ գլուխը վերաբերում էր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին²:

Եթե նոր Օրենսգիրքը համեմատում ենք խորհրդային Հայաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25.07.1988 թվականին

ավելացված՝ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների դեմ տրվող զանգատների գործերի վերաբերյալ 24.1-րդ գլխի հետ, ապա պարզ է դառնում, որ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում «գործողություն» հասկացության փոխարեն օգտագործվում էր «ակտ» եզրույթը, որը ավելի լայն մեկնաբանման հնարավորություն էր տալիս: Այնուամենայնիվ, նոր Օրենսգրքի 26-րդ գլխում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ բնույթի ակտերի օրինականության ստուգման մասին հատուկ կարգավորումներ նախատեսված չէր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ և 15-րդ հոդվածներում, որոնք սահմանում են քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, «նորմատիվ իրավական ակտ» ձևակերպումը նույնպես չի օգտագործվում: Նշված հոդվածներում խոսվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելու մասին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «1. Օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող և քաղաքացու կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դատարանով կարող է ճանաչվել անվավեր:»:

Այս պարագայում հարց էր ծագում՝ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի վերաբերում էր միայն անհատական ակտերին, թե նաև՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին:

Այս ժամանակահատվածում հրապարակված տեսական աշխատություններում, նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողության հարցերը ոչ միայն հատուկ ուշադրության չէին արժանանում, այլև՝ խոսվում էր կառավարման մարմինների ակտերի (վարչական ակտերի) օրինականության նկատմամբ վերահսկողության մասին՝ ստեղծելով այնպիսի տպավորություն, որ խոսքը միայն անհատական ակտերի մասին է: Օրինակ՝ Ն. Ապիյանը և Ա. Պետրոսյանը նշում են. «Նեղ առումով, դատական վերահսկողությունը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ կառավարման մարմնի ակտերը դատարանի կողմից հատուկ ուսումնասիրվում են օրինականության տեսանկյունից՝ նրանց գործողությունների օրինականության հաստատման համար շահագրգիռ անձանց և կառավարման մարմինների դիմումների հիման վրա:»³: Տեսաբանները մենագրության մեջ չեն հստակեցրել՝ խոսքն անհատական, թե, նաև, նորմատիվ իրավական ակտերի մասին է, սակայն նրանք հաճախ գործածում են «վարչական ակտ» հասկացությունը, որից կարելի է եզրակացնել, որ նկատի ունեն կառավարման մարմնի անհատական ակտերը:

Մինչդեռ քաղաքացիական դատավարության մասնագետները հստակ նշում էին, որ օրենսդիրը «ակտեր» ընդհանրական հասկացության մեջ ներառել է ինչպես անհատական բնույթ կրող ակտերը (գործողությունները (անգործությունը) և որոշումները), այնպես էլ նորմատիվ իրավական ակտերը⁴:

Ավելին՝ նրանք քննադատում էին օրենսդրի մոտեցումը, ըստ որի՝ 1998 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում միաբերվել են ըստ էության երկու տարբեր գործեր՝ պետական մարմինների օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու և նույն սուբյեկտների գործողությունները (անգործությունը) վիճարկելու գործերը, որի հետևանքով դատավարական կարգավորումներում շփոթություն է առաջացել: Ավելին, Ռ. Պետրոսյանը այս կապակցությամբ նշում է. «Քաղաքացու իրավունքը խախտող գործողության (անգործության) կամ որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ժամանակ դատարանի խնդիրն այլ է՝ քննության առնել գործի

լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, հետազոտել, վերլուծել և գնահատել այդ հանգամանքները հետազոտող ապացույցները, մինչդեռ նորմատիվ ակտերն անվավեր ճանաչելու գործով դատարանի գործառույթը բոլորովին ուրիշ է՝ տալ նորմատիվ ակտի իրավական գնահատականը, նրա համապատասխանությունն օրենքին, որը որևէ կապ չունի հայցվորի իրավական դիրքորոշման հետ:»:

Ուշագրավ է այն, որ դատավարագետը այս վարույթները առանձնացնելու համար, բերում էր նաև սահմանադրական հիմնավորումներ: Նա կարծում է, որ պետական մարմինների՝ օրենքին հակասող նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելու հիմքում դրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը (1995 թվականի խմբագրությամբ), իսկ նույն սուբյեկտների գործողությունները (անգործությունը) և որոշումները վիճարկելու հիմքում դրված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը⁵: Այս մոտեցումը, որին դեռևս կանոնադառնանք, ունի սկզբունքային նշանակություն, քանի որ դրանից է բխում նաև այն հարցը, թե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը վիճարկելու գործերով, ով կարող է դիմել դատարան:

Դատավարագիտության մեջ թեև ընդգծվում էր վերը նշված երկու խումբ գործերով տարբերակված դատավարական վարույթներ նախատեսելու անհրաժեշտությունը, սակայն պատմական այս ժամանակահատվածում հիմնական խնդիրը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության վիճարկման վարույթների տարբերակումն էր, ինչպես նաև ՀՀ դատարանների կողմից ՀՀ նախագահի ու ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականության դեմ բերված դիմումները քննելուց հետևողականորեն հրաժարվելը:

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության որոշման ինստիտուտների տարբերակումը

1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով կարգավորվում էին պետական մարմինների օրենքին հակասող ակտերը, սակայն նշված գլխում ամրագրված էին առանձին դրույթներ, որոնք կարող էին տպավորություն ստեղծել այն մասին, թե իբրև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը «ներխուժել է» նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու տիրույթ:

Առաջին, նախատեսված էր, որ դիմումում պետք է նշվի՝ (...) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և (կամ) օրենքների ո՞ր հոդվածներին է հակասում վիճարկվող ակտը (1998 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մաս):

Երկրորդ, դատարանը դատական նիստում ստուգում է ակտն ընդունած պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի իրավասությունը, ամբողջ ակտի կամ դրա մի մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին (1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 5-րդ մաս):

Նման ձևակերպումներից, այնուամենայնիվ, չէր կարելի եզրակացնել, որ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը կոչված էր կարգավորելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության վիճարկման հարցեր: Նշված գլխում հետևողականորեն նշվում էր պետական մարմնների՝ օրենքին հակասող ակտերի մասին, իսկ 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում ուղղակի նշված էր. «Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»⁷:

Այսպիսով, հստակ էր, որ 1998 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը վերաբերում էր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության որոշման հարցերին, մինչդեռ, ՀՀ դատարանները երկար տարիներ՝ հրաժարվում էին ՀՀ նախագահի ու կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառույթից:

ՀՀ դատարանների հրաժարումը ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառույթը

ՀՀ դատարանները, ընդհուպ ՀՀ վճռաբեկ դատարանը, այս ժամանակահատվածում հետևողականորեն հրաժարվում էին քննարկել այն դիմումները, որոնցով վիճարկվում էր, հատկապես, ՀՀ նախագահի ու կառավարության նորմատիվ իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանելու հարցը: Նմանատիպ մոտեցում արտահայտել էին նաև առանձին իրավաբան գիտնականներ⁸:

Մյուս կողմից՝ այլ գիտնականներ, գործադիր իշխանության մարմինների նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց՝ դատարանների հրաժարումը որակել են՝ Սահմանադրությանը հակասող: Այսպես՝ Ա. Գամբարյանը նշել է. «Թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածում ձևակերպված իրավական նորմը տարակարծությունների տեղիք է տալիս, սակայն այսօր ՀՀ քաղաքացիները և իրավունքի այլ սուբյեկտներ գրկված չէին լինի կառավարության որոշումների օրինականությունը վիճարկելու հնարավորությունից, եթե դատական իշխանության մարմինները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի մեկնաբանման հարցում մոտենալին համակարգային տեսանկյունից՝ այն դիտարկելով ՀՀ Սահմանադրությանը երաշխավորված արդարադատության մատչելիության և դատական պաշտպանության իրավունքի համատեքստում»⁹:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ընդհանուր իրավասության դատարանները ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության կողմից ընդունված իրավական ակտերի, օրենքին համապատասխանության վերաբերյալ դիմումներին առնչվող հարցը քննելիս, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը, որպես կանոն, մերժել են դրանց քննության ընդունումը: Ձևակերպումը բոլոր դատական ակտերում գրեթե նույնն է՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»: Նշված հիմքով ընդհանուր իրավասության դատական բոլոր ատյանների կողմից դիմումների մերժումը վկայում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության նման ձևակերպումը դատական պրակտիկայում ընդհանրական բնույթ ունեցող դիրքորոշման ձևավորման պատճառ է դարձել: Նման իրավիճակը կարող է լոջորեն խոչընդոտել իրավունքի տարբեր սուբյեկտների՝ օրենքով պաշտպանվող ցանկացած իրավունքի խախտման դատական պաշտպանությանը (ՀՀ սահմանադրական դատարանի 26.11.2006 թվականի ՍԳՌ-665

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որոշում):

Օրինակ՝ քաղաքացի Ա. Զ-ն 13.01.2006 թվականին դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ վիճարկելով ՀՀ նախագահի հրամանագրի՝ օրենքին համապատասխանության հարցը: Առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումի ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 160-րդ հոդվածի 1-ին կետով վեճը ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանը իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Համաձայն Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100-րդ հոդվածին համապատասխան և սույն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և այլ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի որոշելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է: Այսպիսով, նշված նորմերի ուժով դիմումը ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա չէ»:

ՀՀ վճռաբեկ դատարանը 24.02.2006 թվականի Ա. Զ-ի դիմումի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառույթից հրաժարվելը Ա.Ղամբարյանը բացատրում է հետևյալ կերպ. «ՀՀ վճռաբեկ դատարանը, հանդիսանալով գուտ երրորդ ատյանի դատարան, խիստ սահմանափակ ազդեցություն ունեւ իրավական քաղաքականության վրա, նրա որոշումները ինչպես օրենսդիր և գործադիր մարմինների, այն-

պես էլ դատական համակարգում չունենին քաղաքացիական հեղինակություն: ՀՀ վճռաբեկ դատարանը հազվադեպ էր ունակ իրեն վերապահված քաղաքական իշխանությանը ներհատուկ ուժով՝ վերահսկելու գործադիր մարմինների ակտերի օրինականությունը և դրանով իսկ հակադրվելու այդ մարմինների քաղաքականությանը: Ավելին, իշխանության այլ մարմինների հետ հակասություններից խուսափելու նպատակով, ՀՀ վճռաբեկ դատարանը դատավարական որոշ նորմերին տալով հակաիրավական, ոչ համակարգային մեկնաբանություն, հրաժարվում էր ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնել»¹⁶:

Նորմատիվ իրավական ակտերի օրինականության ստուգման դատական գործառույթի կենդանացումը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից

Ընդհանուր իրավասության դատարանների կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց խուսափելու պրակտիկան շտկվեց միայն ՀՀ սահմանադրական դատարանի միջամտությունից հետո: ՀՀ սահմանադրական դատարանը 26.11.2006 թվականի ՍԴՈ-665 որոշմամբ արտահայտել է իր իրավական դիրքորոշումները, որոնք քննարկվող հարցի համար ունեն սկզբունքային նշանակություն:

Նախ՝ իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը (ՍԴՈ-665 որոշման 7-րդ կետ):

Երկրորդ՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է իրավական ակտերի նկատմամբ դատական հսկողության երկու տարատեսակ:

Առաջինը՝ սահմանադրական արդարադատությունն է, որն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանը (ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է նշված ակտերը ճանաչել որպես ՀՀ Սահմա-

www.aradaradutyjournal.com

նադրությանը հակասող և անվավեր:

Երկրորդն՝ ընդհանուր իրավասության դատարանների միջոցով ՀՀ իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության ստուգումն է, որն իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

Ինչպես վկայում է տարբեր երկրների իրավական ակտերի սահմանադրականության ստուգման կամ դրանց օրենքին համապատասխանության հարցին առնչվող օրենսդրության ուսումնասիրությունը. այն երկրներում, որտեղ վարչական արդարադատությունն իրականացնում է վարչական դատարանները, նորմատիվ իրավական ակտերի օրենքին համապատասխանության հարցերը քննության են առնվում այդ դատարանների կողմից, իսկ մյուս երկրներում, որտեղ նպատակահարմար չեն գտել ստեղծել նման դատարաններ, իրավական ակտերի օրենքին համապատասխանության հարցը քննության են առնում սահմանադրական կամ ընդհանուր իրավասության դատարանները: ՀՀ օրենսդրության համաձայն՝ վարչական արդարադատության իրականացման իրավասությամբ ներկայումս օժտված են քաղաքացիական գործեր քննող դատարանները և տնտեսական դատարանը (ՍԳՈ-665 որոշման 4-րդ կետ):

Երրորդ՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը, հետևաբար, նրա իրավասությունն է՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված իրավական ակտերի սահմանադրականության որոշման հարցը: Միարժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ ՀՀ ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ օրենքին համապատասխանության հարցի որոշումը ներկայումս վերապահված է ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններին (ՍԳՈ-665 որոշման 7-րդ կետ):

ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ նա ստեղծված իրավիճակը պայմանավորել է հիմնականում օրենսդրի կողմից տրված ոչ հստակ ձևակերպումներով, մինչդեռ, իրականում, նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունից հրաժարվելու հիմնական պատճառը՝ ընդհանուր իրավասության դատարանների խուսափողական քաղաքականությունն էր: Պատահա-

կան չէ, որ ՀՀ սահմանադրական դատարանը քննարկվող որոշման եզրափակիչ մասում ՀՀ Սահմանադրությանը հակասող է ճանաչել՝ ոչ թե ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը, այլև հակասահմանադրական է համարվել այդ նորմը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությունը:

1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը ուժը կորցրել է 01.01.2008 թվականին, երբ ուժի մեջ մտավ ՀՀ վարչական դատավարության առաջին օրենսգիրքը:

Եզրակացություն

Պատմաիրավական այս վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատարանները խուսափում էին ՀՀ նախագահի ու ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառույթից, թեև 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ դատարաններին վերապահել էր այս տեսակի դատական վերահսկողության գործառույթ, սակայն նրանք դատավարական նորմերի ոչ համակարգային մեկնաբանության միջոցով խուսափում էին ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնել:

ՀՀ դատարանների, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նման զգուշավոր դիրքորոշման պատճառները փնտրելիս պետք է հաշվի առնել նաև՝ առավել ընդհանուր հարթության հարցերը, տվյալ ժամանակաշրջանի քաղաքական ռեժիմի առանձնահատկությունը, քաղաքական և դատական իշխանության հարաբերությունների արժեքաբանական առանձնահատկությունները և այլն:

Ընդհանուր իրավասության դատարանների կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց խուսափելու պրակտիկան շտկվեց միայն ՀՀ սահմանադրական դատարանի կողմից (26.11.2006 թվականի ՍԳՈ-665 որոշում):

www.ardaradutyjournal.com

¹ Ուժը կորցրել է 09.04.2018 թվականին:

² 24.11.1999 թվականին ընդունված և 27.01.2018 թվականին ուժը կորցրած «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում սահմանված էր. «...յուրաքանչյուր քաղաքացի, իրավաբանական անձ իրավունք ունի բողոքով դիմել դատարան, եթե գտնում է, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և կազմակերպությունների անօրինաչափ գործողություններով (որոշումներով) խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները»: Նույն օրենքի 12-րդ հոդվածում սահմանված էր, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և կազմակերպությունների գործողությունների (որոշումների) դեմ քաղաքացիների բողոքները դատարանը քննարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

³ Տե՛ս, Ալիյան Ն., Պետրոսյան Ա. Իրավական պետություն և օրինականություն: 2-րդ հրատ., Եր.: 2001, էջ 212:

⁴ Տե՛ս, Պետրոսյան Ռ., Գատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն): Երևանի պետական համալսարան, Եր.: 2001, էջ 389:

⁵ Տե՛ս, Պետրոսյան Ռ. նույն աշխ. էջ 389:

⁶ Տե՛ս, Պետրոսյան Ռ. նույն աշխ. էջ 388:

⁷ Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանը 26.11.2006 թվականի ՍԳՈ-665 որոշմամբ նշել է, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը ձևակերպված է իրավաբանորեն ոչ հստակ, սակայն որևէ կերպ չի հստակեցրել, թե ինչումն է այդ անհստակությունը:

⁸ Տե՛ս, Գանիբեյան Գ. Գատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը // Հայաստանի Հանրապետության դատախազությունը// Գասազիրք բուհերի համար. Երևանի պետական համալսարան, Եր.: 2004, էջ 241:

⁹ Տե՛ս, Գամբարյան Ա. Վարչական արդարադատության ինստիտուտի կայացման դատավարական և դատարանակազմական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Հայ-ռուսական համալսարան, Տարեկան գիտաժողով (28 նոյեմբեր – 2 դեկտեմբեր 2006թ.). Ռ-ՀՀ, հրատ, 2007.:

¹⁰ Տե՛ս, Գամբարյան Ա. Գատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (մեթոդաբանական և համատեսական հիմնախնդիրներ): Եր.: Ռ-ՀՀ, հրատ, 2013, էջ 260-261:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալիյան Ն., Պետրոսյան Ա. Իրավական պետություն և օրինականություն: 2-րդ հրատ., Եր.: 2001, էջ 212:

2. Պետրոսյան Ռ. Գատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն): Երևանի պետական համալսարան Եր.: 2001 թ.:

3. Գանիբեյան Գ. Գատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը // Հայաստանի Հանրապետության Գատախազությունը: Գասազիրք բուհերի համար. Երևանի պետական համալսարան Եր., 2004թ.:

4. Գամբարյան Ա. Վարչական արդարադատության ինստիտուտի կայացման դատավարական և դատարանակազմական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Հայ-ռուսական համալսարան, Տարեկան գիտաժողով (28 նոյեմբեր – 2 դեկտեմբեր 2006թ.). Ռ-ՀՀ, հրատ, 2007թ.:

5. Գամբարյան Ա. Գատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (մեթոդաբանական և համատեսական հիմնախնդիրներ): Եր., Ռ-ՀՀ, հրատ, 2013թ.:

Рафик Хандянян
Судья Административного суда РА,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Нигилизм в отношении института судебного контроля за законностью нормативных правовых актов в Республике Армения (1999-2006 годы)

В статье анализируется институт судебного контроля за законностью нормативных правовых актов в Республике Армения с 1999 по 2006 год, в частности, изучаются вопросы, связанные с избеганием судами осуществления контроля за законностью нормативных правовых актов. Рассмотрены отличия законности и конституционности нормативных правовых актов, решения судов, так же отражены мнения выдающихся ученых относительно полномочий судов осуществлять контроль за законностью нормативных правовых актов в рассматриваемый период. Анализируется так же решение Конституционного суда Республики Армения, которое положило конец практике избегания судами осуществления контроля за законностью нормативных правовых актов.

Ключевые слова: нормативный правовой акт, судебный контроль, нигилизм, конституционность, законность, исполнительная власть, Кассационный суд Республики Армения, Конституционный суд Республики Армения.

Rafik Khandanyan
Judge of the Administrative Court of the Republic of Armenia
PhD in Law, Associate Professor

SUMMARY

Negation of judicial control over legality of normative legal acts in the Republic of Armenia (1999-2006)

The article analyzes the institution of judicial control over legality of normative legal acts in the Republic of Armenia from 1999 to 2006. More accurately, it reveals such questions as why Armenian judicial system avoided judicial control over legality of normative legal acts from 1999 to 2006 and was it due to the political situation in the country or not. The article reflects differences between constitutional control over normative legal acts and control over legality of normative legal acts, court's decisions and opinions of outstanding scientists on power of Armenian courts to control legality of normative legal acts. The decision of the Constitutional court of the Republic of Armenia which changed the practice of avoiding judicial control over legality of normative legal acts is also discussed in the article.

Key words: normative legal act, judicial control, nihilism, constitutionality, legality, executive power, The Supreme Court of the Republic of Armenia, The Constitutional Court of the Republic of Armenia.

Բնագիրը ներկայացվել է 03.09.2021թ.
Ընդունվել է տպագրության 18.11.2021թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Սիմոնյանը